

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հ. Բ. Ռ. ՄԻՌԻԹԵԱՆ ԻԻԶՊԱՋԵԱՆ-ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ — ԱՄՄԱՆ

1966-1967

Աշակերտութեան թիւն է 206, 118 մանչ
և 88 աղջիկ. Մանկապարտէզ 70 հոգի, նա-
խակըթառուն 130: Այս տարի ունեցանք 33
նոր աշակերտուներ ու 15 չըջանաւարտուներ:

Կրթակոն Նախարարութեան քննիչները
2 անդամ այցելեցին դպրոց կրթական նոր
օրինագիծը դորժադրելու հրահանգով: Նը-
կատի առնելով որ զորոցական տարին
սկսած էր արդէն, գոհացան մանր փոփո-
խութիւններով, բայց 1967-68-ի համար
խիստ հրահանգներ ձգեցին:

Ուսուցչական կազմ: — Ունինք 18 ուսու-
ցիչներ, 9 մասյուն, 4 այցելու:

Ուսախ և չորհակալ ենք որ կիւլպէնկե-
ան Հիմնարկութիւնը բացառիկ յատկա-
ցում մը ըրաւ (900 տոլար = 353 տինար).
Մանկապարտէզի նոր սեղաններու, աթոռ-
ներու և խաղավայրին մէջ զետեղուելիք
մարզանքի դորժեքներու համար: Այս գու-
մարէն ծախսուած է 311 տինար, կը մնայ 12
տինար:

Որպէս կարասի զնեցինք 2 պահարան-
ներ, թէյր-բրդօրտըրը մը և հայերէն զրա-
մեքնայ մը: Խոկ Պրն. Ալեք Մանուկեան,
Հ. Բ. Ռ. Մ. յարդելի Նախապահը, դպրո-
ցին նուիրեց արարերէն զրամեքնայի մը
փոխարժէքը՝ 187 տոլար (63 տինար):

Քաղաքէս Տիկ. կիւմէջեկանին ջանքերով
կրցանք ամերիկան Գիլ ընկերակցութիւնն
ստանալ փոշի կաթ և թէյ ու կրցանք աշա-
կերտութեան շարաթը 3 օր մէկական դո-
ւաթ կաթ բաժնել:

Նոր Տարուայ առթիւ ունեցանք Մնունդի
կոկիկ հանգէս մը: Պատշաճ չուքով տօնե-
ցինք Վարդանանց տօնը ու Ասպիթ 24ը դրա-
բուն ներս: Եղան ծնողական ժողով, աշ-
կերտական թէ ուսուցչական պատյաներ:

Ուսախ ենք հրապարակաւ յայտարա-

րելու որ Հ. Բ. Ռ. Մ. զնահատելով վեր-
ջին 3 տարիներու յարատեւ աշխատանքը,
իր տարեկան յատկացումը դպրոցին բարձ-
րացուց 1600 տոլարէն 1900 տոլարի: Թո-
րոսեան կատկէն ալ ստացանք 1000 տոլար՝
փոխանակ 600-ի: Ընդամէնը՝ 3900 տոլար
(1388 տինար), դպրոցի ծախսին մօտաւո-
րապէս հարիւրին 40ը:

Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը շարու-
նակեց օժանդակէլ 900 տոլար յատկացու-
մով մը, որպէս թոշակ 25 աղքատ աշա-
կերտութերու: Այս տարի յաւելեալ յատկա-
ցում մը ըրաւ Մանկապարտէզի վերոյիշեալ
կարասիներու համար: Ընդամէնը՝ 1890
տոլար (660 տինար): Շնորհակալ ենք նաև
որ կիւլպէնկեան Հիմնարկութիւնը դպրոցին
յատկացուցած է 500 տոլար բացառիկ օդ-
նութիւն մը՝ զրադարանի մը սկիզբը զնելու
համար: Այս գումարը կը յուսանք մօտերս
ստանալ ու զրադարանը մինչեւ վերամուտ
սկսիլ:

Ամերիկայի Մարտցիներու Հայրենակ-
ցական Միութիւնը այս տարի եւս նուիրեց
75 տոլար (26 տինար), Խոչյայէն եկող տ-
չակերտութեռն որպէս համրու ծախս:

Ամմանէն Հայ Օղնութեան Միութիւնը
օդնեց 150 տինարով որպէս մասնակի թոշակ
15 սաներու համար: Նաեւ Ամմանէն Ազգա-
յին Մարզական Միութիւնը որդեզրեց 4 սա-
ներ, վճարելով 40 տինար:

Քաղաքէս Տիկ. Վահագ Վահական շա-
րունակեց մօր անուան Փօնտը: Նաեւ դպրո-
ցիս նուիրեց պասպէթ պօլի կազմած մը:

Ունինք հետեւեալ բարերարները: —

Օրդ. Շ. Փանոսեան — 4 սան

Տիկ. Զ. Փէլթէքեան — 3 սան

Տէր և Տիկ. Թէճիրեան — 2 սան

ՏԵՏԵՍԱԿԱՆ

ՄՈՒՏՏՔ

1 Յունիս 1966 — 30 Յունիս 1967

Տիմար

1. — Հայ Բարեկործական Ընդհան Միութիւն Թորոսեան Կտակ	1000	տուլար
Օժանդակութիւն Ամմանի	2900	տուլար
Օժանդակութիւն Զէրքայի	600	տուլար
		1,595
2. — Կիւլպէնկեան Հիմնարկութիւն Կրթաթոշակ	900	տուլար
Մանկ. Կարսոսի և այլն.	990	տուլար
		660
3. — Երուսաղէմի Պատրիարքարանին		350
4. — Ինքնաշարժի զանձումներ, 9 ամիս		758
5. — Յունիս 1966-ի Ամափերջի հանդէս		148
6. — Ծախուած զիրքերէ դոյցած		147
7. — Դպրոցին օրացոյցներէն դոյցած		60
8. — Աշտկերտներէն հաւաքուած - վկայականներ, քննութեան թուղթներ, ճաշարան, վառարան, սօլար, ձեռական աշխատանքի		200
9. — Զանազան մանր նուէրներ - Ամման Մարաշի Հայրէ. Միութիւն	86	Տիմար
Պրն. Ալեք Մանուկեան, Նիւ Եորք	26	»
	63	»
		185
10. — Աշտկերտներու թոշակներէն դոյցած		
Մնողներէ	1,500	»
Ամմանի բարերար	135	»
Հ. Օ. Մ.	150	»
Ազգ. Մարզ. Միութիւն	40	»
Ունիքա	12	»
		1,887
		Ընդհան Մուտք 5,940

Ե Լ Ք

Տիմար

1. — Ինքնաշարժի ծախսներ Վարիչ	270	
Կարաժի վարձք	24	
2 թաքսի աշտկերտներ փոխադրող	233	
Նորոգութիւն	120	
Պէնզին	214	
Հրամանագիր	14	855
2. — Եկնքի նորոգութիւններ		60
3. — Գիրքերու վճարուած, հին և նոր հաշիւ		200
4. — Օրացոյց, գրենական, ապաղրական		50

5.— Զուր , Հեռաձայն	85
6.— Վառարաններ , ճաշարան , սօլար , ձեռովկանի ծախուր	150
7.— Զանազան մանր ծախուր	100
8.— Մանկապարտէղի կարստիներ , խաղաղացրի դործիքներ	311
9.— Արարերէն զրամեքենայ	63
Հայերէն »	38
Թէյր-բըլորտըր	55
10.— Ռւսուցիչներու ամսականներ մինչև 30.6.67	3,000
11.— Ամառուայ ամսականներ	
Ցուլիս Օդոստոս	450
Ռւսուցիչներու Հատուցում	100
12.— Գաղթականներու մեկնելէն յետոյ ներկի , նորոգութեան , կոտրած զրասեղաններու ծախուր (նախատեսուած)	200
	5,717

ԱՆԱՀԻՏ ՈՍԿԵՐԻՉՔԱՆ

Տառելինի